
ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆՈՒՄ

ՂՈՒԿԱՍՅԱՆ Ս. Վ.

Մատթեոսի Ավետարանը Նոր Կտակարանի չորս Ավետարաններից առաջինն է և ծավալով ամենամեծը՝ բաղկացած 28 գլուխներից: Նրանից հետո գալիս են Մարկոսի, Ղուկասի և Յովհաննեսի Ավետարանները: Մատթեոսի Ավետարանի հարցական նախադասությունները ուսումնասիրել ենք ըստ արևելահայերեն Աստվածաշնչի օրինակների, սակայն զուգահեռաբար տալիս ենք նաև գրաբարի տարբերակները, որպեսզի գաղափար կազմենք, թե ինչ տեսք ունեն դրանք հին հայերենում: Ժամանակակից գրական արևելահայերենի հարցումները քաղված են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ 1994 թ. հրատարակած Աստվածաշնչից, իսկ գրաբարյանը՝ Հայաստանի աստվածաշնչային ընկերության՝ 1997 թ. հրատարակածից: Մատթեոսի աշխարհաբար Ավետարանում կա 136 հարցական նախադասություն, իսկ գրաբարյանում՝ 140, որոնք միմյանց միանշանակ չեն համապատասխանում: Աշխարհաբարյան մեկ հարցման դիմաց գրաբարյանն ունի պատմողական նախադասություն (2,4)¹, մեկի դիմաց՝ արգելական (11,2), իսկ գրաբարյանի երեք հարցումների դիմաց աշխարհաբարյանն ունի պատմողական նախադասություն (6,31-32:10,11:16,26), երեքի դիմաց բացականչական (6,23:6,30:7,11):

Մատթեոսի Ավետարանում հանդես են գալիս տարբեր տեսակի հարցական նախադասություններ: Ինչու-որ հարցումները քանակով բոլորից շատ են: Միայն մեկ հարցում պարունակող ինչու-որ հարցումները 66 հատ են: 9-ը բաղկացած են երկու կամ երեք ինչու-որ հարցումներից, 9-ի դեպքում ինչու-որ-ը հանդես է գալիս այո-ոչ հարցումների հետ, 7-ի դեպքում՝ ընտրանքայինների, 4-ի դեպքում՝ եղանականիշների: Այսպիսով, ընդհանուր առմամբ, ինչու-որ հարցումները դառնում են 105 հատ: Քանակով երկրորդն են այո-ոչ հարցումները՝ 42 հատ, երրորդը՝ եղանականիշները՝ (17 հատ), իսկ չորրորդը՝ ընտրանքայինները (8 հատ): Ավետարանում գործածված են շատ հետաքրքիր հարցական նախադասություններ՝ պարզ և բարդ կառույցներով: Հարցեր են տալիս Հիսուսը, նրա աշակերտները, Հովհաննես Մկրտիչը, ժողովուրդը, փարիսեցիները, օրենսգետները, Պիղատոսը և այլք: Բոլորից շատ հարցեր տալիս է Հիսուսը:

Ավետարանում, բացի երկու-երեք դեպքերից, սկզբից բերվում է ավետարանչի խոսքը, որից հետո կետ է դրվում, և նոր չակերտների մեջ տրվում է համապատասխան հարցումը: Այդ խոսքը հանդես է գալիս կարճ՝ բաղկացած երկու, երեք, չորս և հինգ բառերից, ինչպես՝ «Նրանց ասաց-Ասէ ցնոսա» (8, 26), «Երիտասարդը նրան ասաց - Ասէ ցնա պատանին» (19, 20) և շատ ավելի երկար՝ անգամ բաղկացած երկու և երեք նախադասություններից, ինչպես՝ «Եվ Հիսուս իմանալով նրանց մտածումները՝ նրանց ասաց - Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ

ցնոսա» (9, 4), «Երբ Հիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, Հերովդէս

արքայի օրով, ահա արևելքից մոզեր եկան Երուսաղեմ և ասացին - Եւ ի ծնունելն Յիսուսի ի Բեթղեհեմ Հրեաստանի յաւուրս Հերովտի արքայի, ահա մոզք յարելելից եկին Երուսաղեմ, եւ ասեն» (2,1-2): Ասենք, որ հողվածում դիտարկվող օրինակները բերում ենք ավետարանչի խոսքի հետ միասին, որովհետև դրանք մեկ միասնություն են կազմում:

Մատթեոսի Ավետարանում հարցումներ են կազմված համարյա բոլոր հարցական դերանուններով, ինչպես՝ *ն՞վ, ի՞նչ, ինչո՞ւ, ինչպե՞ս, ո՞ւմ, ո՞ր, ե՞րբ, քանի՞, ինչի՞, ինչո՞վ, ո՞ր, որի՞ն, որտեղի՞ց, որո՞նք, ո՞ւմից* նաև *ինչի՞ համար* և *ի՞նչ բանով*: Մեկ հարցում պարունակողների մեջ բոլորից շատ հանդիպում են *ինչո՞ւ*-ով կազմվածները՝ 18 անգամ, հետո՝ *ի՞նչ*-ով և *ինչպե՞ս*-ով կազմվածները՝ 11, *ո՞վ*-ով՝ 9, մյուսներով՝ 1-3 անգամ: Որոշ հարցական դերանուններ հանդես են գալիս նաև մեկից ավելի հարցումներ պարունակող հարցական նախադասությունների մեջ: Այս պատճառով *ի՞նչ*-ով կազմված հարցումների քանակը դառնում է բոլորից շատ՝ 26, հետո նոր գալիս են *ինչո՞ւ*-ով կազմվածները՝ ընդհանուր թվով՝ 20, *ինչպե՞ս*-ով՝ 14, *ո՞վ*-ով՝ 12 և այլն: Այս հարցատեսակների հետ հանդես եկող համապատասխան ինչու-որ հարցումները կնշենք շարադրանքի համապատասխան մասերում: Այժմ ներկայացնենք միայն մեկ հարցում պարունակող հարցական նախադասությունները՝ ըստ հարցական դերանվան քանակի շատության՝ նշելով երկու և ավելի հարցում պարունակողների միայն համապատասխան համարները:

«Ինչո՞ւ» հարցական դերանունով հարցումներ: Ինչպես ասացինք, Մատթեոսի Ավետարանում *ինչո՞ւ* հարցական դերանունով կա 18 միայն մեկ հարցում պարունակող հարցական նախադասություն, երկուսն էլ՝ մեկից ավելի. մեկը՝ *ինչպե՞ս* հարցական դերանվան հետ (7,3-4), մեկն էլ՝ *ի՞նչ* հարցական դերանվան և ընտրանքային հարցման հետ (9,4-5), որոնցով *ինչո՞ւ*-ով կազմված հարցումների թիվը հասնում է 20-ի: Աշխարհաբարյան *ինչո՞ւ* հարցական դերանունը գրաբար տարբերակում հանդես է գալիս *ընդէ՞ր* և *զի՞* հարցակիր բառերով: Այս հարցումները կառուցվածքով ինչպես պարզ են, այնպես էլ բարդ: Պարզերը հանդես են գալիս առանձին և առաջադաս ու վերջադաս կոչականներով:

ա) Առանձին հանդես եկող պարզ հարցումներ. 1. Եվ աշակերտները մոտենալով՝ նրան ասացին. «Ինչո՞ւ ես առակներով խոսում նրանց հետ» - Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա, ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նոսա (13,10): 2. Այն ժամանակ աշակերտները, առանձին, մոտեցան և Հիսուսին ասացին. «Մենք ինչո՞ւ այն հանել չկարողացանք» - Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն եւ ասեն ցՅիսուս, մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա (17,18): 3. Եվ նա նրան ասաց. «Ինչո՞ւ ես ինձ բարու մասին հարցնում»- Եւ նա ասէ ցնա, Զի՞ հարցանես զիս զբարւոյ (19,17): 4. Հիսուս իմացավ ու նրանց ասաց. «Ինչո՞ւ եք նեղություն տալիս այդ կնոջը» - Գիտաց Յիսուս եւ ասէ ցնոսա, Զի՞ աշխատ առնէք զկինդ (26,10):

բ) Առաջադաս կոչականներով պարզ հարցումներ. 1. Եվ իսկույն Հիսուս երկարեց իր ձեռքը, բռնեց նրան ու ասաց. «Թերհավատ, ինչո՞ւ երկմտեցիր» - Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր, կալաւ զնա եւ ասէ, Թերահաւատ,

Ընդէ՛ր երկմտեցեր» (14, 31): 2. Ժամը երեքի մոտ Հիսուս բարձր ձայնով գոչեց ու ասաց. «... Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ:...» - Եւ զինն ժաման գոչեաց Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ, ... Աստուած իմ, Աստուած իմ, Ընդէ՛ր թողեր զիս (27, 46):

գ) Վերջադաս կոչականով պարզ հարցում. Նրանց ասաց. «Ինչո՞ւ եք վախկոտ, թերահավատներ» - Եւ ասէ ցնոսա, Ընդէ՛ր վատասիրտք էք, սակաւահաւատք (8, 26):

դ) Բարդ համադասական հարցումներ. առաջինը միջադաս կոչականովէ. 1. Հիսուս հասկացավ նրանց խորամանկությունն ու ասաց. «Ինչո՞ւ եք ինձ փորձում, կեղծավորներ, ինձ հարկի դահեկան ցույց տվեք»- Գիտաց Յիսուս զխորմանգութիւն նոցա եւ ասէ, Ձի՞ փորձէք զիս, կեղծաւորք. ցուցէք ինձ զդահեկան հարկին (22, 18-19): 2. Այն ժամանակ Հովհաննէսի աշակերտները մոտեցան նրան և ասացին. «Ինչո՞ւ մենք և Փարիսեցիները հաճախ ծոմ ենք պահում, իսկ քո աշակերտները չեն պահում»- Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յովհաննու եւ ասեն, Ընդէ՛ր մեք եւ փարիսեցիքն պահենք յաճախ, եւ քո աշակերտքն ոչ պահեն (9, 14):

ե) Բարդ ստորադասական հարցումներ, որոնցից առաջինը առաջադաս կոչականով է. 1. Հիսուս այդ իմացավ ու ասաց. «Թերահավատներ, ինչո՞ւ եք ձեր մտքում խորհում, թե հաց չունեք» - Գիտաց Յիսուս եւ ասէ, Ձի՞ խորհիք ի միտս ձեր, թերահաւատք, եթէ հաց ոչ ունիք (16, 8): 2. Այն ժամանակ Հիսուսին մոտեցան փարիսեցիներ ու օրենսգետներ, որոնք Երուսաղէմէից էին, և ասացին. «Ինչո՞ւ քո աշակերտները նախնիների ավանդությունը զանց են անում, քանի որ, երբ հաց են ուտում, ձեռքները չեն լվանում» - Յայնժամ մատեան առ Յիսուս որ յԵրուսաղէմէ փարիսեցիքն եւ դպիրք, եւ ասեն, Ընդէ՛ր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ձերոյն. զի ոչ լուսնան զձեռս յորժամ հաց ուտեն (15,1-2): 3. Նա պատասխան տվեց և ասաց նրանց: «Իսկ դուք ինչո՞ւ զանց եք անում Աստծու պատվիրանը՝ ձեր ավանդության պատճառով. քանի որ Աստված ասաց. «Մեծարի՛ր քո հորը և մորը». և ով վատաբանում է հորը կամ մորը, մահվամբ պիտի պատժվի» - Նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա, Իսկ դուք ընդէ՛ր անցանէք զպատուիրանան Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն: Ձի Աստուած ասաց, Պատուեա զհայր քո եւ զմայր. Եւ, որ բամբասէ զհայր կամ զմայր մահու վախճանեցի (15, 3-5):

«Ի՞նչ» հարցական դերանունով հարցումներ: *Ի՞նչ*-ով միայն մեկ հարցում պարունակող նախադասությունների քանակը Մատթեոսի Ավետարանում 11 է, իսկ 15-ն էլ պարունակում են մեկից ավելի հարցումներ: Այս 15-ից հինգի դեպքում *ի՞նչ*-ը հանդես է գալիս *ո՞վ*, *ո՞ւմ* և *ե՞րբ* հարցական դերանուններով կազմված հարցումների հետ(16,15:16,13: 21,23:22,41-42:24,3), հինգի դեպքում՝ *այո՞ր-ոչ* հարցումների (8,29: 11,7:11,8:11,9:26,62), երկուսի դեպքում՝ չէ՞՞ոք-ով կազմված եղանականիշ հարցումների (5,43:5,46), երկուսի դեպքում՝ ընտրանքային հարցումների (23,17:23,18), մեկի դեպքում էլ՝ *ինչպե՞ս*-ով կազմված *ինչու՞-որ* և ընտրանքային հարցումների հետ(9,4-5): Փաստորեն, ընդհանուր հաշվով, *ի՞նչ*-ով կազմված հարցումների քանակը բոլորից շատ է՝ 26

հատ: Աշխարհաբարյան *ի՞նչ* դերանունը գրաբար տարբերակում հանդես է գալիս *զի՞նչ*, *որո՞վ* հարցական դերանունների և *զի՞նչ*, *զիս՞որ* հարցակիր բառերի միջոցով:

Միայն մեկ հարցում պարունակող հարցական նախադասությունները հիմնականում ունեն պարզ և բարդ ստորադասական կառուցվածք:

ա) Պարզ կառուցվածք ունեցող հարցումներ. 1. Այն ժամանակ Պետրոսը պատասխան տվեց ու ասաց նրան.«... Արդ, մենք ի՞նչ կունենանք» - Յայնժամ պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցնա, ... Արդ զի՞նչ լինիցի մեզ (19,27): 2. Պիղատոսը նրանց ասաց. «Իսկ ի՞նչ անեմ Հիսուսին՝ Քրիստոս կոչվածին» - Ասէ ցնոսա Պիղատոս, իսկ զի՞ արարից զՅիսուս զանուանեալն Քրիստոս (27,22): 3. Եվ նա ասաց. «Ի՞նչ չար բան արեց»- Եւ նա ասէ, Ջի՞նչ չար արար (27,23):

բ) Բարդ ստորադասական հարցումներ, որոնցից առաջինը առաջադաս կոչականով է. 1. Եվ ահա մեկը մոտենալով նրան՝ ասաց. «Բարի՛ վարդապետ, ի՞նչ բարիք գործեմ, որ հավիտենական կյանքն ունենամ» - Եւ ահա մատուցեալ ոմն առ նա՝ ասէ, Վարդապետ բարի, զի՞նչ գործեցից զի ընդունիցիմ զկեանս յաւիտենականս (19,16): 2. Հիսուս տեղում կանգ առավ, կանչեց նրանց և ասաց. «Ի՞նչ եք կամենում, որ ձեզ անեմ» - Ջտեղի առ Յիսուս, կոչեաց զնոսա եւ ասէ, Ջի՞նչ կամիք զի արարից ձեզ (20,32): 3. Հիսուս նրանց ասաց.«... Արդ, երբ այգու տերը գա, այդ մշակներին ի՞նչ կանի» - Ասէ ցնոսա Յիսուս,.... Արդ յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ (22,31,40):

գ) Բարդ ստորադասական հարցում, որն ունի երկու համադաս երկրորդական անդամներ, այսինքն՝ համաստորադաս հարցական նախադասություն. Այն ժամանակ Հիսուս իր աշակերտներին ասաց. «Կամ՝ մարդ իր անձի փոխարեն ի՞նչ փրկանք պիտի տա. քանի որ մարդու որդին գալու է հոր փառքով՝ իր հրեշտակների հետ միասին, և այն ժամանակ յուրաքանչյուրին կը հատուցի ըստ իր գործերի» - Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն իւր,.... կամ զի՞նչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոց: Ջի գալոց է Ռդդի մարդոյ փառօք Հօր իւրոյ հանդերձ հրեշտակօք իւրօվք (16,24,26-27):

«Ինչպե՞ս» հարցական դերանունով հարցումներ: Մատթեոսի Ավետարանում *ինչպե՞ս*-ով կա 11 մեկ հարցում պարունակող հարցական նախադասություն, չորսը՝ մեկից ավելի հարցում պարունակողներ, այսինքն՝ ընդհանուր առմամբ՝ 15 հարցական նախադասություն: Այս չորսից մեկի դեպքում *ինչպե՞ս*-ը հանդես է գալիս *ինչո՞ւ*-ով կազմված հարցման հետ (7,3-4), մեկի դեպքում՝ *այո-ոչ* հարցման (18,12), մեկի դեպքում՝ ընտրանքային հարցման (22,17), մեկի դեպքում էլ՝ *ու՞մից* հարցական դերանունով կազմված *ինչու-որ* և ընտրանքային հարցումների հետ (17,24): Աշխարհաբարյան *ինչպե՞ս* հարցական դերանունը գրաբարյան տարբերակում արտահայտված է *զիսա՞րդ* հարցական բառով: Ավետարանում *ինչպե՞ս*-ով կան պարզ և բարդ հարցական նախադասություններ:

ա) Պարզ կառուցվածքով հարցումներ, որոնցից երկրորդը առաջադաս կոչականով է. 1. Երբ Հիսուս նրանց մտածումներն իմացավ, նրանց ասաց.«...արդ, նրա թագավորությունը ինչպե՞ս կարող է կանգուն մնալ»

- Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա, արդ զիսա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա (12,26): 2. Այն ժամանակ Հիսուս խոսեց ժողովրդին և իր աշակերտներին

ու ասաց. «... Օձեր, իժերի ծնունդներ, ինչպե՞ս պիտի փախչեք գեհե՛նի դատապարտությունից» - Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողովուրդսն եւ աշակերտսն իւր եւ ասէ, օձք, ծնունդք իժից, զիա՞րդ փախնուցուք ի դատաստանէ գեհե՛նին (23,1,33):

բ) Մեկ և ավելի երկրորդական նախադասությամբ բարդ ստորադասական հարցումներ, որոնցից երկրորդը և վեցերորդը առաջադաս կոչականներով են. 1. Հիսուս նրանց ասաց. «... Իսկ եթե Դավիթը նրան Տեր է կոչում, ինչպե՞ս նրա որդին կը լինի», Ասէ ցնոսա Յիսուս, Իսկ եթե Դաւիթ զնա Տէր կոչէ, զիա՞րդ որդի նորա իցէ (22,43,45): 2. Եվ երբ թագավորը ներս մտավ հրավիրվածներին նայելու, այնտեղ տեսավ մի մարդու, որ հարսանիքի զգեստ չէր հագել, ու նրան ասաց. «Ընկե՛ր, որ հարսանիքի զգեստ չունէիր, ինչպե՞ս այստեղ մտար»- Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն՝ Ետես անդ այր մի որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց: Եւ ասէ ցնա, Ընկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց (22,11-12): 3. Այն ժամանակ Հիսուս նրան ասաց. «... Էլ ինչպե՞ս պիտի կատարվեին Սուրբ Գրքերում գրվածները, թե՛ այսպես պետք է լինի» - Յայնժամ ասէ ցնա Յիսուս, Այլ զիա՞րդ լնուցուն գիրք թէ այսպէս պարտ է լինել (26,54): 4. Երբ Հիսուս նրանց մտածումներն իմացավ, նրանց ասաց. «... Կամ՝ ինչպե՞ս կարող է մեկը մտնել հզոր մի մարդու տունը և հափշտակել նրա գույքերը, եթե նախ չկապի հզորին և ապա նրա տունը կողոպտի» - Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա, Կամ զիա՞րդ կարէ ոք մտանել ի տուն հզորի եւ զգործիսն նորա յափշտակել, եթէ ոչ նախ կապիցէ զհզորն, եւ ապա գտունն նոր յափշտակիցէ (12,25,29): 5. Հիսուս այդ իմացավ ու ասաց. «... Արդ, ինչպե՞ս չեք իմանում, թե հացի համար չէ, որ ձեզ ասացի՝ զգույշ լինել փարիսեցիների և սադուկեցիների խմորից» - Գիտաց Յիսուս Եւ ասէ, Արդ զիա՞րդ ոչ իմանայք եթէ ոչ վասն հացի ասացի ձեզ զգույշ լինել ի խմորոյ փարիսեցուցն և սադուկեցուց (16,8,11): 6. Երբ Հիսուս նրանց մտածումներն իմացավ, նրանց ասաց. «Իժերի՛ ծնունդներ, դուք, որ չար եք, ինչպե՞ս կը կարողանաք բարի բաներ խոսել, քանի որ բերանը սրտի լիությունից է, որ խոսում է» - Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա, Ծնունդք իժից, զիա՞րդ կարիցեք բարիս խօսել որ չարքդ եք, քանզի ի յաւելուածոյ սրտի խօսի բերան (12,25,34):

գ) Տարակառուցվածք հարցական նախադասություն. Հիսուս նրանց ասաց. «Իսկ Դավիթն ինչպե՞ս նրան Սուրբ Հոգով կոչում է Տեր և ասում է. «Տերն իմ Տիրոջն ասաց՝ նստիր իմ աջ կողմում, մինչև որ քո թշնամիներին դնեմ քո ոտքերի տակ իբրև պատվանդան» - Ասէ ցնոսա Յիսուս, իսկ զիա՞րդ Դաւիթ Հոգւովն կոչէ զնա Տէր, եւ ասէ, Ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց (22,43-44):

«Ո՛վ» հարցական դերանունով հարցումներ: Այս Ավետարանում *n*՝/հարցական դերանունով կա 8 մեկ հարցում պարունակող նախադասություն. վեցի դեպքում էլ հարցումները մեկից ավելի են, ընդհանուր առմամբ՝ 14 հարցական նախադասություն: Նշված վեցից երեքի դեպքում

n՝-ը հանդես է գալիս *ի նչ*-ով կազմված հարցումների (16,15:16,13: 21,23), երկուսի դեպքում՝ *մի թե*-ով կազմված եղանականիշ հարցումների (7,9-10:12,11), մեկի դեպքում՝

նվքե ր հարցական դերանունով հարցման հետ (12,48): Այդ հարցումները գրաբար տարբերակում արտահայտված են ինչպես *ո՞վ*, այնպես էլ *ո՞նք* հարցական դերանունների միջոցով:

Ո՞վ հարցական դերանունով ևս կան պարզ և բարդ հարցումներ:

ա) Պարզ կառուցվածքի հարցումներ, որոնցից վերջինն ունի առաջադաս կոչական. 1. Այն օրը աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին. «Մեզնից ո՞վ է մեծ երկնքի արքայության մեջ» - Յայնմ ատուր մատեան աշակերտքն առ Յիսուս եւ ասեն, ո՞վ իցէ ի մենջ մեծ յարքայութեան երկնից (18,1): 2. «Եվ երբ նա մտավ Երուսաղեմ, ամբողջ քաղաքը դողաց, և ասում էին՝ ո՞վ է սա» - Եւ ի մտանելն նորա յԵրուսաղեմ, դողդեցաւ քաղաքն ամենայն, եւ ասէ, ո՞վ իցէ սա (21,10): 3. Եվ նա, տեսնելով սաղուկեցիներից և փարիսեցիներից շատերին, որոնք եկել էին իր մկրտությանը, ասաց նրանց. «Իժերի՛ ծնունդներ, ո՞վ ձեզ սովորեցրեց փախչել վերահաս բարկությունից» - Եւ տեսեալ զբազումս ի սաղուկեցոցն եւ ի փարիսեցոցն եկեալս ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա, Ծնունդք իժից, ո՞ցոյց ձեզ փախչել ի բարկութենէն որ գալոցն է (3,7):

բ) Մեկ բարդ ստորադասական և մեկ բարդ համադասական հարցումներ: Վերջինիս երկրորդ բաղադրիչը նույնպես ունի ստորադասական նախադասություն. 1. Հիսուս պատասխանեց և ասաց նրանց. «... Իսկ ո՞վ է այն հավատարիմ և իմաստուն ծառան, որին տերը իր ծառաների վրա կարգեց՝ իր ժամին կերակուր տալու համար նրանց»- Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա, ...Իսկ ո՞վ իցէ հաւատարիմ ծառայ եւ իմաստուն գոր կացոյց տէր իւր ի վերայ ծառայից իւրոց տալ նոցա կերակուր ի ժամու (24,45): 2. Այն ժամանակ թքեցին նրա երեսին, բռունցքով հարվածեցին նրան, և ոմանք էլ ապտակեցին նրան ու ասացին. «Մարգարեացիր մեզ, դու, Քրիստոս, ո՞վ է, որ քեզ հարվածեց» - Յայնժամ թքին ընդ երեսս նորա եւ կոփեցին զնա, եւ ոմանք ապտակեցին, եւ ասեն, Մարգարեաց մեզ, Քրիստոսդ, ո՞վ է որ եհարն քեզ (26,67-68):

«Որտեղի՞ց» հարցական դերանունով հարցումներ: Դիտարկվող Ավետարանում *որտեղի՞ց* հարցական դերանունով կա 5 հարցական նախադասություն. երկուսը՝ միայն մեկ հարցում պարունակող, երեքը՝ մեկից ավելի: Մեկում *որտեղի՞ց*-ը հանդես է գալիս *այո-ոչ* հարցման (13,56), մեկում՝ ընտրանքայինի (21,25), մեկում էլ՝ *չէ՞ որ*-ով եղանականիշի հետ (13,27): Աշխարհաբարի *որտեղի՞ց* հարցական դերանունը գրաբար տարբերակում արտահայտված է *ուստի՞* հարցակիր բառով: Բերենք միայն մեկ հարցում պարունակող նախադասությունները, որոնք երկուսն էլ պարզ կառուցվածքի են. 1. Աշակերտները նրան ասացին. «Իսկ այժմ, այս ամայության մեջ որտեղի՞ց մեզ այնչափ հաց այսքան ժողովուրդ կշտացնելու համար» - Ասեն ցնա աշակերտքն, Իսկ արդ մեզ յանապատի աստ ուստի՞ իցէ այնչափ հաց՝ մինչ յազեցուցանել զայսչափ ժողովուրդ (15, 33): 2. Եվ գալով իր գավառը՝ նրանց ուսուցանում էր իրենց ժողովարանում, այնպես որ նրանք զարմանում ու ասում էին. «Սրան որտեղի՞ց են այս իմաստությունը և գորության գործերը» - Եւ եկեալ ի գաւառ

Իւր ուսուցանէր զնոսա ի ժողովրդեանն նոցա, մինչեւ զարմանալ նոցա եւ ասել, Սմա ուստի՞ իցէ այս իմաստութիւնն և զօրութիւնք (13, 54):

«Ում» հարցական դերանունով հարցումներ: Ավետարանում *n'ul* հարցական դերանունով կա մեկ հարցում պարունակող 3 հարցական նախադասություն, և մեկն էլ՝ մեկից ավելի, որում *n'ul*-ի հետ հանդես է գալիս *h'ny* հարցական դերանունը (22, 41-42)՝ ընդհանուր առմամբ՝ 4 հարցական նախադասություն: Աշխարհաբար *n'ul* դերանվան դիմաց գրաբար տարբերակում գործածված են և՛ *n'ul*, և՛ *n'yr* հարցական դերանունները: *Ում*-ով կան պարզ և բարդ կառուցվածքի հարցումներ:

ա) Պարզ կառուցվածքի հարցումներ. 1. Եվ նա ասաց նրանց. «Այս պատկերը կամ գիրը ո՞ւմն է» - Եւ ասե ցնոսա, Ույր է պատկերս այս կամ գիր (22,20): 2. Երբ Հովհաննեսի աշակերտները գնացին, Հիսուս սկսեց ժողովրդին ասել Հովհաննեսի մասին. «... Ում նմանեցնեմ այս սերընդին...» - Եւ իբրեւ նոքա գնացին, սկսաւ Յիսուս ասել ցժողովուրդսն զՅովհաննէ, ... Ում նմանեցուցից զազգս զայս. ... (11,7,16):

բ) Բարդ ստորադասական հարցում. Նույն օրը նրան մոտեցան սաղուկեցիները, որոնք ասում էին, թե հարություն չկա. հարց տվեցին ու ասացին. «... Արդ, հարության ժամանակ ո՞ւմ կին կը լինի նա, քանի որ բոլորն էլ նրան իբրև կին ունեցան» - Յայնմ աւուր մատեան առ նա սաղուկեցիքն որ ասէին Չիք յարութիւն. հարցին ցնա, և ասեն,.... Արդ ի յարութեանն ո՞յր եւթանցն եղիցի նա կին, զի ամենեքին կալան զնա կին (22,23,28):

«Ուր» հարցական դերանունով հարցումներ: Ավետարանում *n'ir* հարցական դերանունով կա 3 նախադասություն՝ բոլորը միայն մեկ հարցում պարունակող: *Ուր* հարցական դերանունը գրաբար տարբերակում հանդես է գալիս անփոփոխ ձևով: *Ուր*-ով երեք հարցումներն էլ բարդ են՝ մեկ և երկու ստորադասական հարաբերությամբ. 1. «Եվ հավաքելով բոլոր քահանայապետերին ու ժողովրդի օրենսգետներին՝ հարցրեց, թե ո՞ւր պիտի ծնվի Քրիստոսը» - Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետս եւ զդպիրս ժողովրդեանն՝ հարցանէր ի նոցանէ թէ ո՞ւր ծնանիցի Քրիստոսն (2,4): 2. Եվ Բաղարջակերաց տոնի առաջին օրը աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին. «Ուր ես կամենում՝ պատրաստենք քեզ համար զատկական ընթրիքը, որ ուտես» - Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն մատեան աշակերտքն առ Յիսուս եւ ասեն, ո՞ւր կամիս զի պատրաստեցուք քեզ ուտել զգատիկն (26, 17): 3. Երբ Հիսուս ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում... ահա արևելքից մոզեր եկան Երուսաղեմ և ասացին. «Ուր է հրեաների արքան, որ ծնվեց, որովհետև նրա աստղը տեսանք արևելքում և եկանք նրան երկրպագելու» - Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհեմ Հրեաստանի... ահա մոզք յարեւելից եկին յԵրուսաղեմ, Եւ ասեն, Ուր է որ ծնաւ արքայն Հրեից. զի տեսաք զաստղն նորա յարեւելս, եւ եկաք երկիր պագանել նմա (2,1-2):

«Քանի՞» և «Ե՞րբ» հարցական դերանունով հարցումներ: *Քանի՞* և *ե՞րբ* հարցական դերանուններով կան երեքական հարցական նախադասություն: *Քանի՞*-ով կազմվածներից մեկը մեկ հարցում ունի, երկուսը՝

մեկից ավելի (16,9-10:18,21), *է ըբ*-ովներից մեկը նույնպես մեկ հարցում պարունակող է, իսկ երկուսը՝ մեկից ավելի, ընդ որում, դրանցից մեկը կազմված է երկու *է ըբ*-երով (17, 16), մյուսը՝ երեք (25, 37-39): Քանի՞-ին գրաբար տարբերակում համապատասխանում են *քանի՞ն* և *քանի՞ ցուք*, *է ըբ*-ին՝ հենց *է ըբ*-ը: Քանի՞-ով մեկ հարցում պարունակողը պարզ կառուցվածքի է, իսկ *երբ*-ովը՝ բարդ համադասական: 1. «*Քանի՞*»-ով պարզ կառուցվածքի հարցում. Եվ Հիսուս նրանց ասաց. «Քանի՞ նկանակ ունեք» - Եւ ասէ ցնոսա Յիսուս, քանի՞ նկանակ ունիք (15,34): 2. «*Երբ*»-ով բարդ համադասական հարցում. Այն ժամանակ նրանք էլ պիտի պատասխանեն ու ասեն. «Տէ՛ր, է՛ ըբ տեսանք քեզ քաղցած, կամ ծարավ, կամ օտար, կամ մերկ, կամ հիվանդ, կամ բանտի մեջ ու քեզ չծառայեցինք» - Յայնժամ պատասխանի տացեն եւ նոքա եւ ասացեն, Տէ՛ր, է՛ ըբ տեսաք զքեզ քաղցեալ կամ ծարաւի կամ օտար կամ մերկ կամ հիւանդ կամ ի բանտի, եւ ոչ պաշտեցաք զքեզ (25,44):

«Ինչո՞վ» և «Որի՞ն» հարցական դերանունով հարցումներ: Նշվածներից յուրաքանչյուրով կան երկուական հարցական նախադասություն: *Ինչո՞վ*-ները բարդ ստորադասական են և մեկ հարցումով, *որի՞ն*-ներից մեկը նույնպես մեկ հարցումով է, իսկ մյուսը՝ մեկից ավելի (27,17): *Ինչո՞վ*-ին գրաբար տարբերակում համապատասխանում է *ի՞ ի*-ը, *որի՞ն*-ին՝ *զո՞ն*:-

ա) «*Ինչո՞վ*» բարդ ստորադասական հարցումներ. 1. Եվ... նրա մոտ եկան իր աշակերտները, և նա սկսեց նրանց ուսուցանել ու ասել.«... սակայն եթե աղը անհամանա ինչո՞վ այն կաղվի.» - Եւ...մատեան առ նա աշակերտք նորա: Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա եւ ասէր, ապա թէ աղն անհամի, ի ի յաղիցի (5,1-2,13): 2. Երբ Հիսուս նրանց մտածումներն իմացավ, նրանց ասաց. «... Եվ եթե ես բեեղզեբուղով եմ հանում դներին, ձեր որդիները ինչո՞վ կը հանեն.» - Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա, Եւ եթէ ես բեեղզեբուղով հանեմ զդէս, որդիքն ձեր ի ի հանիցեն (12,25,27):

բ) «*Որի՞ն*»-ով բարդ ստորադասական հարցում. Կուսակալը պատասխան տվեց ու ասաց նրանց. «Այս երկուսից որի՞ն էք ուզում, որ ձեր համար արձակեմ»-Պատասխանի ետ դատաւորն էւ ասէ ցնոսա, Չո՞ կամիք արձակեցից ձեզ յերկուց աստի (27,21):

«Ինչի՞», «Ո՞ր» և «Որո՞նք» հարցական դերանունով հարցումներ: Սըրանցից յուրաքանչյուրով կա միայն մեկ հարցական նախադասություն: Երկուսը պարզ կառուցվածքի են, մեկը՝ բարդ, ընդ որում, *որո՞նք*-ը միայնակ հանդես է գալիս որպես ինքնուրույն հարցում: *Ինչի՞* դերանվանը գրաբար տարբերակում համապատասխանում է *զի՞*, *ո՞ր*-ին՝ հենց *ո՞ր*, *որո՞նք*-ին՝ *զո՞րս* հարցակիր բառերը: 1. Այն ժամանակ քահանայապետը պատռեց իր զգեստներն ու ասաց. «Հայիոյեց, էլ ինչի՞ են պետք մեզ վկաներ....» - Յայնժամ քահանայապետն պատռեաց զհանդերձն իւր, եւ ասէ, հայիոյեց, զի՞ եւս պիտոյ են մեզ վկայք (26,65): 2. Իսկ փարիսեցի-

ները երբ լսեցին, թե նա պապանձեցրեց սաղուկեցիներին, ի մի հավաքվեցին և նրանցից մեկը նրան փորձելով՝ հարցրեց ու ասաց. «Վարդապետ, օրենքի մեջ ո՞ր պատվիրանն է մեծ» - Իսկ փարիսեցիքն իբրև լուան եթե պապանձեցոյց զսաղուկեցիսն, ժողովեցան ի միասին. Եւ եհարց մի ոմն ի նոցանէ զնա փորձելով, եւ ասէ, Վարդապետ, ո՞ր պատուիրանն է մեծ յօրէնս (22, 34-36): 3. Նա ասաց. «Որո՞նք» - Ասէ ցնա, Զո՞րս (19.18):

«Ի՞նչ բանով» և «Ինչի՞ համար» կապակցություններով հարցումներ: Սրանցով նույնպես կա մեկական հարցում, որոնցից առաջինը պարզ կառուցվածքի է, երկրորդը՝ բարդ: «Ի՞նչ բանով» հարցական բառակապակցությունը գրաբար տարբերակում արտահայտված է «ի՞ւ ի՛իք» հարցական կապակցությամբ, իսկ «ինչի՞ համար»-ը՝ «ընդէ՞ր» հարցակիր բառով. 1. Երիտասարդը նրան ասաց.«... արդ, էլ ի՞նչ բանով պակաս եմ դեռ» - Ասէ ցնա պատանին, ... արդ ի՞ւ ի՛իք պակաս իցեմ (19, 20): 2. Երբ աշակերտները այս տեսան, բարկացան ու ասացին. «Ինչի՞ համար է անուշահոտ յուղի այդ վատնումը, քանի որ կարելի էր մեծ զնով վաճառել այդ և տալ աղքատներին» - Իբրև տեսին աշակերտքն, բարկացան եւ ասեն, Ընդէ՞ր է կորուստդ այդ իւղոյ. Զի մարթ էր վաճառել զդա մեծագնի եւ տալ աղքատաց (26,8-9):

Երկու «ինչու-որ» հարցումներից կազմված նախադասություններ: Սույն Ավետարանում կա 8 երկու ինչու-որ հարցումներից կազմված նախադասություն, մեկն էլ՝ երեք: Ստացվում է՝ կա մեկից ավելի հարցում պարունակող 9 հարցական նախադասություն:

1. «Ի՞նչ» և «ո՞վ» հարցական դերանուններով հարցումներ. ա) Եվ Հիսուս Փիլիպպյան Կեսարիայի կողմերը գնալով՝ հարցրեց աշակերտներին ու ասաց. «Մարդիկ իմ մասին ի՞նչ են ասում, ո՞վ է արդու Որդին» - Եւ ելեալ Յիսուսի կողմանս Փիլիպպեայ Կեսարեայն՝ հարցանէր ցաշակերտսն եւ ասէր, Զո՞ որ ասեն զ ինեն մ արդիկն թէ իցէ Որդի մարդոյ (16,13): բ) Հիսուս նրանց ասաց. «Իսկ դուք իմ մասին ի՞նչ եք ասում, ո՞վ եմ ես» - Ասէ ցնոսա, իսկ դուք զո՞ որ ասէք զինէն, թէ իցեմ (16,15): գ) Եվ երբ տաճար եկավ, մինչ ուսուցանում էր, նրան մոտեցան քահանայապետերը, ժողովրդի ծերերը և ասացին. «Ի՞նչ իշխանությամբ ես այդ անում, և ո՞վ տվեց քեզ այդ իշխանությունը» - Եւ իբրև եկն ի տաճար, մատեան առ նա, ինչդեռ ուսուցանէր, քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն եւ ասեն, Որո՞վ իշխանութեամբ առնես զայդ, եւ ո՞վ ետ զիշխանութիւն զայդ (21,32):

2. «Ի՞նչ» և «ո՞ւմ»-ով հարցում. Եվ երբ փարիսեցիները հավաքվեցին, Հիսուս նրանց հարցրեց ու ասաց.«Ի՞նչ կարծիք ունեք Քրիստոսի մասին, ո՞ւմ որդին է»-Եւ ի ժողովել փարիսեցոցն եհարց ցնոսա Յիսուս եւ ասէ, Զիա՞րդ թուի ձեզ վասն Քրիստոսի.ո յր որդի է (22,41-42):

3. «Ո՞վ» և «ո՞վքեր»-ով հարցում. Նա այդ ասողին պատասխանեց ու ասաց. «Ո՞վ է իմ մայրը, կամ ո՞վքեր են իմ եղբայրները» - Նա պատասխանի ետ այնմիկ որ ասացն ցնա, եւ ասէ, Ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք (12,48):

4. «Ե՞րբ» և «ի՞նչ»-ով հարցում. Եվ մինչդեռ նստած էր Ձիթենյաց լեռան վրա. աշակերտները առանձին մոտեցան նրան ու ասացին. «Ասա՛ մեզ, այդ ե՞րբ կը լինի, և

կամ քո գալստյան ու այս աշխարհի վախճանի նշանն ի՞նչ կը լինի» - Եւ մինչդեռ նստեր ի լերինն Ձիթենեաց, մատէան առ նա աշակերտքն առանձինն եւ ասեն, Ասա մեզ, ե՞րբ լինիցի այդ, եւ կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գալստեանն եւ վախճանի աշխարհիս (24,3):

5. «Ինչո՞ւ» և «ինչպէ՞ս»-ով հարցում. Լսել եք արդարև, թե՛ ինչ ասվեց. «... Ինչո՞ւ քո եղբոր աչքի մեջ շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի մեջ գերանը չես տեսնում. կամ ինչպէ՞ս քո եղբորն ասում ես՝ Թող որ հանեմ այդ շյուղը քո աչքից և ահա քո աչքում գերան կա» - Լուարուք ապաքէն զի ասացաւ Ձի՞ տեսանես զշիւղ յական եղբոր քո, եւ ի քում ական զգերանդ ոչ տեսանես: Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո, Թող հանեց զշիւղդ յականէ քումմէ. եւ ահաւաղիկ ի քում ականդ գերան կայ (5,43:7,3-4):

6. Երկու «ե՞րբ»-ով հարցում. Հիսուս պատասխան տվեց ու ասաց. «Ո՞վ անհավատ և մոլորված սերունդ, մինչև ե՞րբ ձեզ հետ պիտի լինեմ, մինչև ե՞րբ ձեզ պիտի հանդուրժեմ. նրան ինձ մոտ բեր» - Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ, Ով ազգ անհաւատ եւ թեր, մինչեւ ցե՞րբ իցեմ ընդ ձեզ, մինչեւ յե՞րբ անսայցեմ ձեզ. աճ զնա առ իս (17,16):

7. Երեք «ե՞րբ»-ով հարցում. Այն ժամանակ արդարները պիտի պատասխանեն ու ասեն. «Տե՛ր, ե՞րբ տեսանք քեզ քաղցած ու կերակրեցինք, կամ՝ ծարավ և ջուր տվեցինք. ե՞րբ տեսանք քեզ օտար և մեր մեջ առանք, կամ՝ մերկ և հագցրինք. ե՞րբ տեսանք քեզ հիվանդ կամ բանտի մեջ ու եկանք քեզ այցի» - Յայնժամ պատասխանի տացեն նմա արդարքն եւ ասացեն, Տե՛ր, ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ, եւ կերակրեցաք, կամ ծարաւի՛ եւ արբուցաք. Ե՞րբ տեսաք զքեզ օտար, եւ ժողովեցաք, կամ մերկ՝ եւ զգեցուցաք: Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ կամ ի բանտի, եւ եկաք առ քեզ (25, 37-39):

Հոդվածում այլ կարգի հարցումների հետ հանդես եկող *ինչու-որ* հարցական նախադասությունները չեն քննվում և չեն բերվում: Վերջում մեկ անգամ ևս արդեն միասնաբար նշենք Մատթեոսի Ավետարանի այն համարները, որոնց տակ դրանք գործածված են: *Այո-ոչ*-ի հետ *ինչու-որ* հարցումները հանդես են գալիս հետևյալ համարների տակ՝ 13,56:16,9-10:18,12:26,62:11,7:11,8:11,9-10:18,21, ընտրանքայինների հետ հետևյալ՝ 9,4-5:17,24:21,24-25:22,17:23,17:23,19:27,17 եղանականիշների հետ հետևյալ՝ 5,46:7,9-10:12,11:13:27:

МЕСТОИМЕННЫЕ ВОПРОСЫ В ЕВАНГЕЛИИ ОТ МАТФЕЯ

ГУКАСЯН С. В.

Резюме

Восточноармянский вариант Евангелия от Матфея содержит 136 вопросительных предложений, а древнеармянский – 140. Причем местоименные вопросы преобладают. В тексте рассматриваемого Евангелия насчитывается 105 местоименных вопросов, из коих 66 содержат лишь один, а 30-более одного вопроса. При этом вопросы составлены с использованием почти всех вопросительных местоимений, однако вопросительные местоимения *что? почему? как? кто?* употребляются чаще остальных.